ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra
Federal Department of Foreign Affairs FDFA
Swiss Agency for Development and Cooperation SDC

SDA Strategic Development Agency
Strategies for Development

ԿԱՆԽԵ՛ՆՔ ԲՐՈՒՑԵԼՈՉԸ ՄԻԱՍԻՆ

հուշաթերթ բնակչի համար

Ի՞նչ է բրուցելոզը

Բրուցելոզը *մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդություն է, որը սովորաբար ուղեկցվում է փոփոխական տենդով, թուլությամբ, մկանացավերով, հոդացավերով, ախորժակի բացակայությամբ և քրտնարտադրությամբ: Մարդկանց մոտ հիվանդության գաղտնի շրջանը տևում է երկու կամ երեք շաբաթ*

Ո՞վ է կարող վարակվել բրուցելոզով

Բրուցելոզով կարող են հիվանդանալ ինչպես բոլոր տարիքի և սեռի մարդիկ, այնպես էլ գյուղատնտեսական, տնային (ընտանի) և վայրի կենդանիները

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԲՐՈՒՑԵԼՈԶԻՑ

- Մի՛ գնեք կաթ, կաթնամթերք և մսեղիք պատահական վայրերից
- Ընտրե՛ք միայն գործարանային փաթեթավորմամբ կաթ և կաթնամթերք
- Լավ եփե՛ք միսը, քանի որ բրուցելոզի հարուցիչները ոչնչանում են միայն լավ եփելուց հետո
- Պահպանե՛ք անձնական հիգիենան. Կենդանիների հետ շփվելուց հետո լվացեք ձեռքերը

Ինչպե՞ս կարող ենք վարակվել բրուցելոզով

Բրուցելոզի վարակի հիմնական աղբյուրը հիվանդ կենդանիներն են, և նրանցից ստացված մթերքը: Մարդը վարակվում է հիվանդ կենդանիներին խնամելիս, ինչպես նաև ջերմային մշակման չենթարկված կաթ, կաթնամթերք (հատկապես՝ պանիր) և լավ չեփված մսեղիք օգտագործելու դեպքում

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐՆ ԵՆ

- **փոփոխական ջերմություն**
- **առատ քրտնարտադրություն, հատկապես՝ գիշերային ժամերին**
- **մկանների, հոդերի կամ մեջքի ցավեր**
- **թուլություն և հոգնածություն**
- **ախորժակի բացակայություն**

Նշված ախտանշանների դեպքում ՄԻ ՁԲԱՂՎԵ՛Ք ԻՆՔՆԱԲՈՒԺՄԱՄԲ, այլ ԴԻՄԵ՛Ք ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

Հիշե՛ք՝

երեխաներն առավել զգայուն են բրուցելոզի նկատմամբ: Եղե՛ք պատասխանատու քաղաքացի և ծնող. հիվանդությունների նկատմամբ պայքարի գործընթացում ունեցե՛ք Ձեր ներդրումը՝ նպաստելով մասնագետների աշխատանքներին

Կենդանիների և սննդի հետ կապված խնդիրների դեպքում զանգահարել՝
Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության
ԹԵԺ ԳԻԾ՝ 20-60-40

Մարդկանց շրջանում հիվանդության հետ կապված հարցերի դեպքում զանգահարել՝
Առողջապահության նախարարության
ԹԵԺ ԳԻԾ՝ 52-88-72